

Մ աշտոցի Ա րձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
 WWW.SOURPHAGOP.ORG (17-րդ տարի)

Այս թիւով.....

Կիրակնօրեայ Դպրոցի Ամանորի եւ Սուրբ Ծննդեան Հանդէս Էջ 1,11,12

Յունուար Ամսուան Բացատրական Տօնացոյց Էջ 2-4

Ճրագալոյց Ս. Ծննդեան Աստուածայայտնութիւն Խթում

Տաղ Սուրբ Ծննդեան Յովհաննու Կարապետ Ջրօրհնէք

Ճրագալոյց Ս. Ծննդեան Ծարական Խորհուրդ Մեծ

Յիսուսի Ծնունդը Էջ 5

Պահուած Բար Էջ 6

Ո՞րն է Ճիշդ Պատասխանը Էջ 7-10

Յունուար 2017 (ԻԴ տարի թիւ 5)

Կիրակնօրեայ Դպրոցի Ամանորի եւ Սուրբ Ծննդեան Հանդէս



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի Ամանորի եւ Սուրբ Ծննդեան յայտագիրը տեղի ունեցաւ Կիրակի, 8 Յունուար 2017-ի ժամը 11:30-ին, Ս. Յակոբ Վարժարանի «Բաստրմաճեան» սրահին մէջ ի ներկայութեան ծնողներու եւ բարեկամներու:

Աշակերտներ եւ հանդիսատեսներ յոտնկայս երգեցին Տէրունական աղօթքը: Ապա աշակերտները դարձեալ յոտնկայս աղօթեցին Ներսէս Ծնորհալիի «Իմաստութիւն Հօր Յիսուս»ը ու երգեցին Կիրակնօրեայի քայլերգը:

Ապա իօսք առաւ Տնօրէնը՝ Թորոս Պապիկեան որ անդրադարձաւ Մանուկ Յիսուսի բացակայութեան Դեկտեմբեր ամսուան մէջ ուր Christmas-ի տիրական դէմքը Կաղանդ Պապան էր: Բացատրելէ ետք պատմական պատճառները որոնք 5-րդ ստիպեցին Եւրոպայի եպիսկոպոսներուն փոխելու (շար. էջ 15) (շար.

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ

Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի:

Ամսուան Համարը

«Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն»: *Յովհաննէս 1.14*

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Յունուար ամսուան բացատրական տօնացոյց

Կիր. 1	Ամանոր
Եշ. 5	ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՍԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
Ուր. 6	ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՍԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
Շբթ. 7	Յիշատակ Մեռելոց
Ուր. 13	ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Շբթ. 14	Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին
Գշ. 24	Ս. Վահան Գողթնացիի յիշատակութեան օր

Պահքի Օրեր՝ 1, 2, 3, 4, 18, 20, 25, 27

Ճրագալոյց Ս. Ծննդեան կը կոչուի Աստուածայայտնութեան նախորդող երեկոյեան արարողութիւնը: Ճրագալոյցը բարդ բառ մըն է, «ճրագ լուցանել (վառել)», որովհետեւ եկեղեցւոյ մէջ երեկոյեան բազմաթիւ լապտերներ ու կանթեղներ կը վառին եւ պատարագ կը մատուցուի, որուն ընթացքին բոլոր հաւատացեալները վառող մումեր կը բռնեն: Ճրագալոյցի լապտերներու եւ մումերու լոյսը կը խորհրդանշէ այն հոգեւոր լոյսի ճառագայթումը մեր մէջ, որ մեզի պարզեւեց Փրկիչը իր տնօրինութիւններով:

Աստուածայայտնութիւն (Սուրբ Ծնունդ եւ Մկրտութիւն)

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի տնօրինութիւնները, որոնցմով Ան յայտնուեցաւ աշխարհին (Գաբրիէլ հրեշտակապետի աւետումը, Յիսուս Մանուկին ծնունդը, ութօրեայ թլփատութիւնը, հովիւներու եւ մոզերու երկրպագութիւնը, քառասնօրեայ ընծայումը, ինչպէս նաեւ Յորդանան գետին մէջ մկրտուիլը) առաջին դարերուն կը տօնուէին միեւնոյն, Աստուածայայտնութիւն կոչուող, մեծ տօնախմբական շրջանին:

Հետագային այս տօնի գրեթէ բոլոր յիշատակները առանձնացան՝ տարուայ մէջ բաժնուելով ըստ համապատասխան ամիսներու եւ օրերու: Մնացին միայն Ծնունդը եւ Մկրտութիւնը, որոնք ըստ Աւետարանին կատարուած են նոյն օրը՝ երբ Յիսուս 30 տարեկան էր: Ըստ աւանդութեան այդ օրը Յունուար 6-ն էր:

Աւելի ուշ, Ե. դարուն (451 թուին Քաղկեդոնի մէջ գումարուած չորրորդ Տիեզերական ժողովին՝ որուն Հայաստանեայց Եկեղեցին չմասնակցեցաւ) Յունա-Հռոմէական եկեղեցին, Ծննդեան տօնը եւս անջատեց Մկրտութենէն եւ սկսաւ տօնել Դեկտեմբեր 25-ին (մոռցնել տալու համար այդ օրերու արեւի պաշտամունքը Եւրոպայի մէջ) որ տարածում գտաւ ամբողջ աշխարհին մէջ: Սակայն Հայ Եկեղեցին հաւատարիմ ժառանգ հնագոյն աւանդութեան եւ մինչեւ այսօր Քրիստոսի ծննդեան եւ մկրտութեան յիշատակը միացեալ կը տօնէ Յունուար 6-ին Աստուածայայտնութիւն անուանումով:

Զրօրհնէքի արարողութիւնը հաստատուած է ի յիշատակ Քրիստոսի մկրտութեան: Այն կը կատարուի Աստուածայայտնութեան տօնին: Հին ժամանակ ջրօրհնէքը կը կատարուէր գետերու կամ լիճերու ափին, այժմ՝ եկեղեցւոյ մէջ: Պատարագի աւարտին քահանան յատուկ ընթերցումներով, քարոզէ եւ աղօթքէն յետոյ խաչով կ'օրհնէ մեծ տակառի մէջ լեցուած ջուրը, Ս. Միլոռն կաթեցնելէ ետք անոր մէջ, եւ զայն կը բաժնէ հաւատացեալներուն՝ իբրեւ սրբութեան խորհրդանիշ եւ բժշկութեան միջոց:

ԽԹՈՒՄ

«Խթում» անուան տակ ծանօթ են Սուրբ Ծնունդը նախորդող երեկոյեան ընթացքին կատարուող նախատօնական եկեղեցական եւ ժողովրդական արարողութիւնները:

Այդ երեկոյ եկեղեցիէն ներս կանթեղներ կը վարուին եւ ճրագը կը բաժնուի ժողովուրդին՝ անոնց մոմերը վառելով ու այդպէս վառած մոմերը տուն տարուելով: Ճրագ վառելու այս սովորութեան հետեւորդութեամբ՝ Խթումի երեկոյեան տրուած է նաեւ ճրագալոյց անունը:

Անցեալին իբր նախատօնակ ճրագալոյց կը կատարուէր Հայաստանեայց Եկեղեցոյ բոլոր մեծ տօներուն, իսկ ներկայիս միայն Սուրբ Ծնունդի եւ Զատկուայ տօները նախորդող երեկոներուն:

Ճրագալոյցի ժողովրդական սովորութիւններէն են մէկը միւսին Քրիստոսի ծննդեան աւետիս տալ, ապա աւանդական ընթրիքի շուրջ հաւաքուիլ, ճաշակելու համար ձուկ, բանջար, հաւկիթ եւ գինի:

ՏաղՍուրբ Ծննդեան
 Այսօր տօն է սուրբ ծննդեան, աւետի՛ս.
 Տեսնո՞ւմք մերոյ եւ յայտնութեան, աւետի՛ս:
 Այսօր Արեւն արողարութեան, աւետի՛ս.
 Երեւեցա՛ւ ի մեջ մարդկան, աւետի՛ս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետի՛ս.
 Ծնաւ երբք զանմահ Արքայն, աւետի՛ս:
 Այսօր հրեշտակք յերկնից իջեալ, աւետի՛ս.
 Ընդ մեզ օրհնեն զանմահ Արքայն, աւետի՛ս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Գիտէի՞ր թէ....
 Յիսուս երեսուն (30) տարեկան էր երբ մկրտուեցաւ:
 Յիսուս ութ (8) օրուայ էր երբ անուանակոչուեցաւ, եւ
 մենք իր անուանակոչութիւնը կը տօնենք Յունուար 13-ին:

Յովհաննու Կարապետ

Կարապետ կը նշանակէ «ճամբայ բացող»: Յովհաննէս Կարապետը, Յիսուս Քրիստոսի գալուստը վկայած մարգարէներէն վերջինն է որ նաեւ մկրտեց զԱյն այնուհետեւ կոչուելով «Յովհաննէս Մկրտիչ»: Ան մեծ համբաւ ունէր իր ապաշխարհութեան քարոզչութեամբ եւ իրեն հետեւորդներու մկրտութեամբ: Իր հանդէպ յարգանքը այնքան մեծ եղած է որ իր հետեւորդները հարց կու տային թէ արդեօք ի՞նքն էր Քրիստոսը: Յիսուս Յովհաննէսի մասին ըսաւ թէ աւելի մեծ մարդ գոյութիւն չունէր, սակայն Երկնքի մեջ, վերջինն իսկ իրմէ աւելի մեծ պիտի ըլլար:

Հայաստանեայց առաքելական եկեղեցին Յովհաննու Կարապետի յիշատակը կը նշէ չորս առիթներով, որոնցմէ ծննդեան տօնը այս տարի Հինգշաբթի Յունուար 14-ին է:



Հովիւներուն Երկրպագութիւնը



Մկրտութիւն
Յովսափան Յովսափանեան

Խորհուրդ մեծ

Ո՞վ չի գիտեր Սուրբ Ծնունդի մասին գրուած ամենաճանօթ այս շարականը որ կը հնչէ ամէն տարի խթման գիշերը աւետելու համար Յիսուսի ծնունդը: Այս շարականին հեղինակն է Մովսէս Քերթոզ Հայրապետ եւ զայն գրած է 441 թուականին: Ահա այդ շարականին գրաբար բառերը եւ աշխարհաբար թարգմանութիւնը.

Խորհուրդ մեծ եւ սքանչելի
որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւք երգեն ընդ հրեշտակս,
տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ
ի Բեթղեհեմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէ ք,
զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի
ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի չօրէ՛
ի սուրբ այրին բազմեցաւ:

* * *

Ճրագալոյց Նբ. Ծննդեան Շարական

Զանճառելի լուսոյ մայր
Եւ ըզբնակարան անըսկզբնակից Որդւոյն,
Օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զանհաս տնօրէնութեան մայր
Եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին,
Օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զբոլորից փրկութեան մայր,
Որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ.
Ըզնա ամենեքեան օրհնութեամբ
մեծացուցանեմք:

Սքանչելի եւ մեծ խորհուրդ է,
որ այսօր յայտնուեցաւ.
Հովիւները հրեշտակներու հետ կ'երգեն,
աշխարհին աւետիս կու տան:

Ծնաւ նոր արքայ
Բեթղեհեմ քաղաքին մէջ.
Ով ժողովուրդ, մարդիկ, օրհնութիւն տուէք
որովհետեւ Ան մեզի համար մարմնացաւ:


Երկնքին եւ երկրին վրայ Անբաւելին
խանձարուրներու մէջ փաթթուեցաւ.
Առանց բաժնուած ըլլալու չօրմէն
սուրբ մտորին մէջ բազմեցաւ:

Հիսուսի Ծնունդը Ղուկաս 2.1-21



Եկո՛ր Քեթեհէ՛մ երթանք եւ տեսնենք պարահաճը, այն ինչ որ Մէրը մեզի յայտնեց:

Օգնէ՛ Բովիւներուն որ գտնեն Հիսուս մանուկը:



Մուտն սր: Մէզէն կրնանք անցնիլ եւ յառազանալ:



Սխալ մանուկ սր: Ետ դարձէ՛ք:



Մէկը որ ճեպի էամբան ցոյց կու տայ՝ Յառազացիր:



Պահուած բառ

ւ	ա	բ	գ	ա	բ	տ	ե	ւ	ի	ս	ն
ա	ա	ռ	է	ն	ա	է	ի	բ	ւ	ի	ք
բ	ա	ն	ա	ն	բ	ն	ա	կ	բ	բ	ի
ա	ն	թ	ա	ռ	ա	ւ	ւ	ա	բ	ա	լ
թ	ռ	բ	ռ	ս	ւ	ւ	ի	ս	ա	ք	ա
ռ	բ	ա	կ	տ	է	ն	տ	ի	ն	ւ	ս
լ	ա	ա	ի	ա	ի	ա	ն	ա	ա	ն	ի
կ	յ	փ	բ	ս	բ	ք	ռ	լ	հ	ի	բ
ն	բ	ւ	լ	լ	ռ	լ	ւ	ռ	ի	թ	ա
ա	է	ռ	ռ	պ	ե	տ	ի	կ	տ	է	ն
ն	լ	ւ	հ	ռ	ի	փ	ս	ի	ւ	է	լ

Արտեմիս
Անթառամ
Արամէ
Արփի
Անահիտ
Արմէն
Առէն
Անի
Ալիք

Արին
Էտկար
Թորոս
Լուսին
Կասիա
Հռիփսիմէ

Մանասէ
Մարգար
Միսաք
Մարաթուկ
Մինաս
Մարի
Մուրատ
Մարալ

Նանար
Նորայր
Պետիկ
Ռիթա
Սրբուհի
Սիրաք

Սիմոն
Սիրան

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացուր ըստ Մարթէոսի Աւետարանին 2. 9-12

Քրահանգը, աստղը, առազնորդեց, երկրպագեցին, ոսկի, կնդրուկ, ՎՄՈՒՍ, երապի

Թագաւորին այս ----- լսելէ ետք, մոգերը մեկնեցան: Անոնք
 չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն -----, որ արեւելքի
 մէջ տեսեր էին. եւ ահա աստղը ----- վիրենք մինչեւ որ եկաւ
 ու կեցաւ այն վայրին վրայ ուր երեխան կը գտնուէր: Երբ տուն մտան,
 տեսան երեխան իր մօրը՝ Մարիամին հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով
 ----- մանուկին: Ապա բացին իրենց արկղերը եւ շիտուսի
 ընծայեցին իրենց նուէրները՝ -----, ----- եւ
 -----:

Յետոյ ուրիշ եամբով գացին իրենց երկիրը, առանց Քերովդէսի
 Բանդիպելու, ինչպէս որ Աստուած ----- մը մէջ Քրահանգեց
 իրենց:

Պրն է Եիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. և Գ. դասարաններու անկիւն

1.- Պրն ւ փոնը այս փարի կը փոնենք
 Յունուար 24-ին:
 ա. Ա. Յովհաննէս Ոսկերերան
 Քայրապետին
 բ. Ա. Աբգար թագաւորին
 գ. Ա. Վահան Գողթնացիին
 դ. Յովնան մարգարէին

Աստուածայայտնութիւնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Պէկտեմբեր 18-ին
 գ. Յունուար 25-ին
 դ. Յունուար 27-ին

2.- Այս փարի էրբ կը փոնենք
 Յովհաննէս Սկրտիչին փոնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Յունուար 14-ին
 գ. Յունուար 21-ին
 դ. Յունուար 27-ին

7.- Յիսուս ինչո՞վ մկրտուեցաւ:
 ա. Ձէթով
 բ. Ջուրով
 գ. Միւռոնով
 դ. Դուրով

3.- Այս փարի էրբ կը փոնենք Յիսուսի
 Ճննդեան փոնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Յունուար 18-ին
 գ. Յունուար 20-ին
 դ. Յունուար 27-ին

8.- Յիսուս որո՞ւ կողմէ մկրտուեցաւ:
 ա. Սէր Գառնիկին
 բ. Արբաւանին
 գ. Յովհաննէս Սկրտիչին
 դ. Քահանայապետին

4.- 2018-ին էրբ փեղի պիտի ունենայ
 Ջրօրհնէ՞քը:
 ա. Յունուար 6-ի Ա. Պատարագէն երբ:
 բ. Յունուար 5-ի երեկոյեան
 գ. Ջափիկին
 դ. Բարեկենդանին

9.- Ի՞նչ կը կոչենք Ա. Ծնունդին
 նախորդող երեկոն:
 ա. Դսթուս
 բ. Ջափիկ
 գ. Ջրօրհնէք
 դ. Բարեկենդան

5.- 1899-ին էրբ փոնեցինք Յիսուսի
 մկրտութեան փոնը:
 ա. Յունուար 6-ին
 բ. Յունուար 18-ին
 գ. Պէկտեմբեր 25-ին
 դ. Յունուար 27-ին

10.- Երբ փեղի կ'ունենայ Քրագալոյցը:
 ա. Յունուար 6-ի Ա. Պատարագէն երբ:
 բ. Յունուար 5-ի երեկոյեան
 գ. Ջափիկին
 դ. Բարեկենդանին

6.- Այս փարի էրբ կը փոնենք Յիսուսի

Պրն է եիշդ պափասխանը

Նախակրթարան Պ., Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Յիսուսի անուանակոչութիւնը անշարժ փօն մըն է: Ամէն փարի երբ կը փօնենք Յիսուսի անուանակոչութիւնը:
Յունուար --- ին:

2.- Մոգերը ինչ նուիրեցին Յիսուս Մանուկին:
ա. ---ի
բ. -----կ
գ. ւ-----

3.- Պ՛վ էր Քրէաստանի թագաւորը երբ Յիսուս ծնաւ:
-----ս

4.- ա. Պ՛վ էր Քոռոմի կայսրը երբ Յիսուս ծնաւ:
բ. Մարուան խանիերորդ ամիսը այս կայսրին անունով է:
ա. -----
բ. --

5.- Քինգ Մաղաւարներէն ո՞ր մէկը անշարժ փօն մըն է:
ա. Ա. Ծնունդ
բ. Ա. Զարիկ
գ. Պայծառակերպութիւն
դ. Վերափոխումն Ա. Աստուածածնի
ե. Խաչվերայ

6.- Յիսուսի մկրտութեան ընթացքին, Ա. Քոզին ինչի կերպարանջով իզաւ Յիսուսի վրայ:
-----ի

7.- Ամբողջացո՞ւր ըստ Մարկոսի Աւետարանի 1.11-ին

Երկինքէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր.
- Պուն Ես -- ս----- Պ-----, որուն
-----:

8.- Ա. Ծնունդի խթման մատուցուող Ա. Պափարագի ընթացքին երբ «Սուրբ Աստուած, Սուրբ Եւ Քլօր, Սուրբ Եւ անմահ ողորմեա մեզ» կ'երգենք, ինչ կ'ըսենք երկրորդ փողին:
ա. որ խաչեցար վասն մեր
բ. որ յայտնեցար վասն մեր
գ. որ եկիր Եւ գալոց Ես
դ. որ յարեար ի մեռելոց

9.- Ինչ է այս փարի Յունուար 14-ին յիշատակուող Սուրբին անունը:
ա. Յովհաննէս
բ. Կարապետ
գ. Աարգիս
դ. Մարտիրոս

10.- Յիսուսի ծննդեան Քովիւներու այցին մասին միայն մէկ աւետարանի մէջ կը կարդանք: Պր աւետարանին մէջ:
ա. Մարթէոս
բ. Մարկոս
գ. Պուկաս
դ. Յովհաննէս

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Անոնք որոնք Ս. Ծնունդը կը տօնեն
Դեկտեմբեր 25-ին, ե՞րբ կը տօնեն
մկրտութիւնը:
ա. Յունուար 6-ին
բ. Յունուար 1-ին
գ. Յունուար 13-ին
դ. Դեկտեմբեր 25-ին

2.- Արեւմտեան Եւրոպայի քրիստոնեաները
ե՞րբ փոխեցին Ս. Ծննդեան տօնը Յունուար
6-էն Դեկտեմբեր 25-ին:
ա. 325 Նիկիոյ ժողովին
բ. 451 Քաղկեդոնի ժողովին
գ. 381 Կոստանդնուպոլսոյ ժողովին
դ. 431 Եփեսոսի ժողովին

3.- Հայաստանեայց Եկեղեցին այս տարի
ո՞ր սուրբին տօնը կը յիշատակէ Յունուար
24-ին:

Ս. -----

4.- Գրէ՛ շիտակ ժամանակագրական
շարքով հետեւեալ տօները.
Աստուածայայտնութիւն,
Անուանակոչութիւն, Յովհաննու
Կարապետ, Ս. Սարգիս, Ղեւոնդեանց,
Վարդանանց, Բուն Բարեկենդան:
ա.
բ.
գ.
դ.
ե.
զ.
է.

5.- Գրէ՛ շիտակ ժամանակագրական
շարքով հինգ տաղաւարները:
ա.
բ.
գ.
դ.
է.

6.- Ամբողջացո՛ւր:
Խորհուրդ — եւ սքանչելի
որ յայսմ ատուր -----.
----- երգեն ընդ հրեշտակս
տան ----- աշխարհի

7.- Ամբողջացո՛ւր:
----- նոր արքայ
Ի ----- քաղաքի.
Որդիք մարդկան -----
զի վասն մեր -----:
----- երկնի եւ երկրի
ի ----- պատեցաւ.
Ոչ ----- ի Հօրէ
ի սուրբ ----- բազմեցաւ:

8.- Ամբողջացո՛ւր. երախայի մը
մկրտութեան ընթացքին կնքահայրը կը
պատասխանէ.
«-----, -----, ----- եւ
-----: Մկրտուիլ եւ արդարանալ,
----- մեղքերէ, ազատուիլ չար -----
եւ ----- Աստուծոյ:

9.- Ամբողջացո՛ւր.
Մկրտուող կը դառնայ Աստուծոյ
----- եւ -----ը կը
կրէ իր վրայ որպէս աներելոյթ -----:

10.- Հայկական ՌՆԿԶ տարին ո՞ր
տարուան կը համապատասխանէ:

2---



էջ 1-էն) Ս. Ծննդեան օրը Յունուար 6-էն Դեկտեմբեր 25-ի, ան հաստատեց թէ Կիրակնօրեան, կը ձգտի իր աշակերտներուն մէջ Հայ Քրիստոնէայ նկարագիր կերտել, հիմնուած Քրիստոսի վրայ, եւ առ այդ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտը քաջատեղեակ պահելու համար Քրիստոսի Ծնունդին, ամէն տարի կը պատրաստէ Սուրբ Ծննդեան կենդանի պատկերը, ուր երկրորդականի աշակերտները կը կարդան Մատթէոսի եւ Ղուկասի ատետարաններէն հատուածներ եւ մանկապարտէզի ու նախակրթարանի աշակերտները կը ներկայացնեն հովիւներ, մոզեր, հրեշտակներ, Մարիամ, Յովսէփ, Օրէնքի ուսուցիչներ ու

Հերովդէս թագաւորը:

Ապասկաս կենդանի պատկերը: Ընթերցողներ՝ Երկրորդականի աշակերտներ Սդեֆան Տէմիրճեան, Սալփի Թորոսեան, Անդրանիկ Նասոյեան, Արմէն Փիլիպոսեան, Հրակ Պանքեան, Ալէքս Տեմերճեան, եւ Թալին Խաչընճեան (ուսուցիչ՝ Առէն Պապիկեան, ուղեկից ուսուցիչ՝ Մհեր Պանքեան) փոխն ի փոխ կարդացին Աւետարաններէն, մինչ քննարկեալ աշակերտները կենդանի պատկեր մը ներկայացուցին ըստ կարդացուածին: Բեմը կը ներկայացնէր վրան մը, որ գործածուեցաւ թէ՛ որպէս Յովսէփի եւ Մարիամի Նազարէթի տունը եւ թէ՛ այն քարայրը ուր Յիսուս ծնաւ (բեմի պատասխանատու՝ Սեւակ Պապիկեան): Ճոխ էր տարազներու հաւաքածոն (բեմի զարդարանք եւ տարազներու պատասխանատուներ՝ Յասմիկ Նաճարեան եւ Շողիկ Նաճարեան): Իւրաքանչիւր աշակերտ առիթը ունեցաւ բեմ ներկայանալու, եւ կարդացուածին բոլոր մանրամասնութիւնները ներկայացուեցան: Հետաքրքրական էր փոքրիկ հովիւներուն ներկայութիւնը իրենց ոչխարներով եւ «երկնաւոր զօրքերու բազմութիւն»ը որ ներկայացուց «Հրեշտակներու պարը» (պարուսոյց՝ Ռուբինա Գարամինասեան):



Կենդանի պատկերի աւարտին ժամանեց Կաղանդ Պապուկը որուն ներկայութեան Մանկապարտէզի աշակերտները արտասանեցին «Նամակ Կաղանդ Պապային» քերթուածէն մի քանի համարներ (ուսուցչուհի Թամար Գիզիրեան): Նախակրթարանի Ա. եւ Բ. դասարաններու աշակերտները ըրին իրենց «Գիշերուան Աղօթք»ը (ուսուցչուհի Թալին Բարսեղեան) եւ «Լուռ Գիշեր» երգեցին:



Ապա Դպրոցի երգչախումբը, դաշնակի ընկերակցութեամբ Բասգալ Տեսերճենի, երգեց «Այսօր Տօն է Սուրբ Ծննդեան», «Խորհուրդ Մեծ եւ Սքանչելի» եւ «Բարեխօսութեամբ»



շարականները, նաեւ «Այբուբեն» երգը:

Ապա, դասարան առ դասարան, աշակերտները յառաջացան եւ Տնօրէնը ներկայացուց իւրաքանչիւրը Կադանդ Պապուկին, որմէ անոնք ստացան իրենց նուէրները:

Յայտագրի ատարտին ներկաները հիւրասիրուեցան կարկանդակով (պատրաստուած ծնողներու Տօքթ. Թալին Քէօսէեանի եւ Տիկ. Անի Պապիկեանի եւ ուսուցչուհի Տիկ. Թալին Բարսէղեանի կողմէ), սուրճով եւ պտուղի հիւթով: Հաւաքոյթը աւարտեցաւ ներկաներու նոր տարուայ բարեմաղթութիւններու փոխանակումով: (վերի լուսանկարները տրամադրուած են ծնողք Պրն. Արա Տեսիրճեանի):

